ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՄՈՆՐԵԱԼԻ (ԿԱՆԱԴԱ) «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴՒՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՆՈՒԻՐԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐԱՑՆ «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Սիրով ընդառաջելով Կանադայի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին, զոհունակ սրտով Հայրական Մեր ողջոյնները, սէրն ու Հայրապետական օրհնութիւնն ենք բերում Մոնրէալի Թէքէեան հրատարակչական Կենտրոնի «Ապագայ» շաբաթաթերթի խմբագրական կազմին, բոլոր աշխատակիցներին ու ընթերցողներին՝ թերթի հիմնադրման քսանհինգամեայ յոբելեանի առիթով:

Սփիւռքի մեր ժողովրդի կեանքում մեծ է առաքելութիւնը հայախօս մամուլի՝ մեսրոպատառ հայոց լեզուի հնչումով ծառայելու հայ հոգու ինքնութեան ու նկարագրի պահպանմանը:

Յարգարժան խմբագիր «Ապագայ» շաբաթաթերթի, սիրելի աշխատակիցներ. գովեստի ու բարձր գնահատանքի էք արժան Դուք, որ քառորդ դար, «որպէս մշակք այգւոյն Տեառն», Ձեր ծառայութիւնն էք բերում բարեպաշտ մեր ժողովրդին եւ նպաստում Կանադայի ողջ հայութեան հայրենաբոյր եւ եկեղեցանուէր կեանքի շինութեանը: Ուրախութեամբ ենք անդրադառնում, որ «Ապագայ» շաբաթաթերթը իր եռալեզու հրապարակումներով արժանի տեղ ունի կանադահայոց մէջ՝ լուսաբանելով համայնքային կեանքը եւ նրանց հաղորդ դարձնելով տարածաշրջանի ու հայրենական կեանքում տեղի ունեցող նշանակալից իրադարձութիւններին:

Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ Բարձրեալն Աստուած հանապազ օգնական եւ աջակից լինի Ձեզ ամենքիդ եւ Իր մշտական օրհնութեան ու առատ ողոր-

մութեան ներքոյ պարգեւի բաջառողջ ու երջանիկ բազում օրեր, ամենայն բարիք եւ ստեղծագործական նորանոր յաջողութիւններ:

Թող «Ապագայ» շաբաթաթերթը իր ազգաշահ առաքելութեամբ յարատեւի մեր ժողովրդի կեանքում՝ լինելով սպասուած սիրելի հիւր բոլոր յարկերից ներս:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 6-ն Մայիսի ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 34